

Իմացեք ձեր իրավունքներն ու պարտականությունները

Ձեր իրավունքները

Արդար վերաբերմունք

- WIC ծրագրի ընդգրկվածության և մասնակցության ստանդարտները միևնույն են բոլորի համար՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, ազգային ծագումից, տարիքից, հաշմանդամությունից կամ սեռից:
- Եթե Ձեզ անիրավունակ են համարել WIC-ի համար, Ձեզ գրավոր կերպով կհայտնեն պատճառները և կտեղեկացնեն արդար լսման Ձեր իրավունքների վերաբերյալ:

Դուք կստանաք

- WIC նպաստներ, որոնք կարող եք օգտագործել առողջ սնունդով Ձեր ամենամսյա սննդի բյուջեն լրացնելու համար
- Օգտակար խորհուրդներ սննդաբար սննդակարգի և կրծքով կերակրման վերաբերյալ
- Տեղեկություններ այլ առողջապահական ծառայությունների մասին (ինչպես օրինակ՝ առողջապահական խնամքը և պատվաստումը), ներառյալ այս ծառայությունների գտնվելու վայրերը
- Խրախուսում օգտվելու այս խորհուրդներից և այլ ծառայություններից

Ձեր պարտականությունները

Գնեք WIC-ի կողմից լիազորված սնունդ

- Կարևոր է յուրաքանչյուր ամիս օգտագործել Ձեր WIC նպաստները:
- Օգտագործեք Ձեր WIC նպաստները WIC-ի կողմից լիազորված մթերային խանութներում:
- Ամեն անգամ մթերային խանութում WIC ուտելիքներ գնելիս, Ձեզ հետ ունեցեք Ձեր WIC քարտը:
- Ձեր WIC նպաստներով գնեք միայն WIC-ի կողմից լիազորված ուտելիքներ:
- Օգտագործեք սնունդը միայն ծրագրին մասնակից անձի համար:

Բարեկիրթ եղեք

- Պահպանեք Ձեր WIC ժամադրությունները կամ նախապես զանգահարեք, եթե կարիք ունեք օրը փոխելու:
- Բերեք բոլոր պահանջվող փաստաթղթերը բոլոր WIC այցելիներին:
- Վերաբերվեք WIC-ի անձնակազմին ու մթերային խանութի անձնակազմին բարեկրթորեն ու հարգանքով:
- Մի սպառնացեք կամ ֆիզիկապես մի վնասեք որևէ մեկին WIC-ի գրասենյակում կամ մթերային խանութում:

Ազնիվ եղեք

- WIC աշխատակազմին մշտապես տրամադրեք ընթացիկ ու ստույգ իրավունակության տեղեկություններ:
- Անմիջապես հայտնեք Ձեր եկամտի, ընտանիքի կազմի, հասցեի և/կամ հեռախոսահամարի հետ կապված բոլոր փոփոխությունների մասին:
- Հայտնեք MediCal-ի, CalWORKS-ի (TANF) կամ CalFresh-ի համար իրավունակության որևէ փոփոխության վերաբերյալ:
- Մի վաճառեք, փոխանակեք, կամ փորձեք վաճառել մա փոխանակել Ձեր WIC նպաստները, ուտելիքը կամ մանկական կաթնախառնուրդն անձամբ, տպագիր տարբերակով կամ առցանց: Այսպիսի խախտման համար Ձեզ կարող են որակազրկել:

Ես հասկանում եմ...

- Այս վկայագրման ձևը ներկայացվում է՝ կապված Դաշնային օգնության ստացման հետ: Ծրագրի պաշտոնյաները կարող են ստուգել տրամադրած տեղեկությունները: Ես հասկանում եմ, որ դիտավորյալ կեղծ կամ մոլորեցնող հայտարարություն անելը կամ փաստերի դիտավորյալ սխալ ներկայացումը, թաքցնումը կամ պահումը կարող է բերել նրան, որ հարկավոր լինի կանխիկ դրամով վճարել նահանգային գործակալությանը ինձ սխալմամբ տրված նպաստային սննդի արժեքը, և ես կարող եմ հետապնդվել քաղաքացիական կամ քրեական դատական կարգով՝ ըստ նահանգային ու դաշնային օրենսդրության:
- Երկակի մասնակցությունը (Միաժամանակ նպաստներ ստանալը WIC-ի մեկից ավելի գրասենյակներից) ապօրինի է և կարող է հանգեցնել WIC-ից որակազրկման:

- Եթե ինձ հայտնում են, որ ես իրավունակ չեմ WIC-ի համար, ինձ գրավոր կերպով կտեղեկացնեն պատճառների մասին:
- Ես կարող եմ բողոքարկել իմ իրավունակության վերաբերյալ WIC-ի տեղական գործակալության կողմից կայացված որևէ որոշում:
- Ես 15 օր առաջ ծանուցում կատանամ, եթե իմ վկայագրման ժամկետը մոտենում է ավարտին կամ եթե ինձ պատրաստվում են հեռացնել ծրագրից:
- Եթե ես խնդրեմ մեկ ուրիշին փոխարինել ինձ WIC-ին առնչվող գործողության ժամանակ, ես նրանց կբացատրեմ այս իրավունքները և պարտականությունները:
- Եթե ես պատրաստվեմ փոխել իմ բնակության վայրը, ես կարող եմ փոխանցել իմ WIC նպաստները, և իմ WIC-ի տեղական գործակալությունը կարող է օգնել ինձ փաստաթղթերի հարցում:

WIC ծրագիրը խտրականության չի ենթարկում

Համաձայն Քաղաքացիական իրավունքների մասին Դաշնային օրենքի և ԱՄՆ Գյուղատնտեսության նախարարության (US Department of Agriculture, USDA) քաղաքացիական իրավունքների կանոնակարգերի և քաղաքականությունների՝ USDA-ին, իր Գործակալություններին, գրասենյակներին և աշխատակիցներին, ինչպես նաև հաստատություններին, որոնք մասնակցում կամ ղեկավարում են USDA-ի ծրագրերը, արգելվում է խտրականությունը՝ ռասայի, մաշկի գույնի, ազգային պատկանելիության, սեռի, հաշմանդամության, տարիքի հիման վրա, ինչպես նաև USDA-ի կողմից իրականացվող կամ ֆինանսավորվող ցանկացած ծրագրի կամ գործունեության մեջ հետապնդումը կամ հաշմանդամության քաղաքացիական իրավունքների բնագավառում նախկինում կատարած գործողությունների համար:

Հաշմանդամություն ունեցող անձիք, ում հարկավոր են հաղորդակցման այլընտրանքային միջոցներ ծրագրի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար (օրինակ՝ Բրայյան համակարգ, մեծ տառաչափ, ձայնասկավառակ, ամերիկյան ժեստերի լեզու և այլն), պետք է կապվեն այն Գործակալության հետ (նահանգային կամ տեղական), որտեղ դիմել են նպաստների համար: Խույլ լսողության կամ խոսելախանգարման խնդիրներ ունեցող անձիք կարող են դիմել USDA-ին՝ Դաշնային հաղորդագրությունների ծառայության միջոցով՝ (800) 877-8339 հեռախոսահամարով: Բացի այդ, ծրագրի վերաբերյալ տեղեկությունները կարող են հասանելի լինել այլ լեզուներով:

Ծրագրի խտրականության մեղադրանքով գանգատ ներկայացնելու համար, լրացրեք USDA-ի Ծրագրային խտրականության գանգատի ձևաթուղթը (USDA Program Discrimination Complaint Form), (AD-3027), որը կարելի է գտնել առցանց՝ <https://www.ascr.usda.gov/filing-program-discrimination-complaint-usda-customer> հասցեով կամ USDA-ի ցանկացած գրասենյակում, ինչպես նաև նամակ ուղղել USDA-ին և նամակում ներկայացնել ձևաթղթում պահանջվող բոլոր տեղեկությունները: Բողոքի ձևաթղթի օրինակը խնդրելու համար գանգահարեք (866) 632-9992 հեռախոսահամարով: USDA-ին ներկայացրեք ձեր լրացված ձևաթուղթը կամ նամակը հետևյալ հասցեով՝

- (1) փոստով՝
**U.S. Department of Agriculture
Office of the Assistant Secretary for Civil Rights
1400 Independence Avenue, SW
Washington, D.C. 20250-9410,**
- (2) ֆաքսով՝ **(202) 690-7442,** կամ
- (3) էլ. նամակով՝ **program.intake@usda.gov**

Այս հաստատությունը տրամադրում է հավասար հնարավորություններ:

Ես կարդացել եմ այս փաստաթուղթն ամբողջությամբ: Ինձ տեղեկացրել են Ծրագրում իմ իրավունքների և պարտականությունների մասին: Իմ ունեցած բոլոր հարցերին (եթե դրանք եղել են) տրվել են բավարար պատասխաններ: Ես հաստատում եմ, որ իմ կողմից տրամադրված տեղեկությունները ստույգ են և ճշգրիտ, ըստ իմ գիտելիքի:

_____ Ընտանիքի ներկայացուցիչ/խնամակալի ստորագրություն

_____ Ամսա

_____ [Family ID]

Staff Use Only: Local agency staff has reviewed the *Know Your Rights and Responsibilities* form with the family representative/caretaker, and any and all questions have been answered to their satisfaction.